

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

13.07.2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական
- Ռ.Մարգարյանը -փորձագետ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար` Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի Ժ/պ Ժ.Ղազարյանին`

Համայնքների ղեկավարների հետ կազմակերպել անհատական քննարկումներ սեփական եկամուտների հավաքագրման առանձին հարկատեսակների մասով, վեր հանել խնդիրներն ու առաջարկությունները և տեղեկատվությունը ներկայացնել ամենշաբաթյա կտրվածքով:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի Ժ/պ Ա.Գասպարյանին`

Մարզպետարանի կայքում և պաշտոնական էջերում հրապարակման ենթակա նյութերի որակի և բովանդակության բարելավվածան նպատակով կատարել ուսումնասիրություններ և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի Ժ/պ Վ.Ղարսայանին`

1. Ուսումնասիրել և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձորի թիվ 18 դպրոցի տանիքի շինարարական թերությունների առաջացման և դրանց վերացման վերաբերյալ:

2. Վանաձորի համայնքապետարանի հետ համատեղ քննարկել և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի թիվ 7 դպրոցի հարակից կառուցվող հետիոտնային գետնանցումից հաշմանդամների օգտվելու վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Հարթագյուղ համայնքի ջրամղիչ պոմպի տեղադրման հետ կապված աշխատանքների վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ